

“Ոսկէ Միջինի” Կանոնակարգը

- 1. Պահպանէք տարածքի մաքրութիւնը:** Մաքրութիւն պահպանէք Ձեզանից եւ Ձեր գործընկերներից յետոյ: “Ոսկէ Միջին”-ում բոլորը պէտք է միմեանց աջակցեն:
- 2. Մի ծխէք:** Դա վնասակար է Ձեր եւ առաւել վնասակար Ձեզ շրջապատող մարդկանց առողջութեանը: Մի ծխէք նաեւ մուտքի մօտ: Մի նետէք ծխախոտի մնացորդները գետնին, այլ գցէք աղբարկղը:
- 3. Պահպանէք ընկերական մթնոլորտ՝ հիմնուած քաղաքավարութեան, սիրալիրութեան եւ փոխադարձ յարգանքի վրայ:**
- 4. Եղէք լաւ ունկնդիր:** Յիշէք, որ ունէք երկու ականջ եւ մի բերան: Ուստի անհրաժեշտ է երկու անգամ աւելի շատ լսել, քան խօսել: Դիտողութիւններ արէք թեմայի շուրջ եւ կարճ՝ երկու բոպէի ընթացքում (այս նպատակով իւրաքանչիւր սեղանին յատկացուած է աւազի ժամացոյց): Ուրիշներին եւս հնարաւորութիւն տուէք արտայայտուելու նախքան երկրորդ անգամ խօսելը:
- 5. Արտայայտէք Ձեր մտքերը:** Մի թաքցրէք Ձեր գաղափարները, որպէսզի դրանք օգտակար լինեն նաեւ ուրիշներին:
- 6. Մեծահոգի եղէք Ձեր փոխյարաբերութիւններում եւ ռեակցիաներում:** Խուսափէք ոչ տեղին մանրախնդրութիւնից եւ վրիպումներ փնտրելուց:
- 7. Մի ընդհատէք միմեանց:** Կողմնակի գրոյցներ մի վարէք ուրիշների ելոյթների ժամանակ: Դա քաղաքավարի չէ:
- 8. Մի շեղուէք թեմայից:** Խուսափէք անձնական վիրաւորանքներից: Նմանատիպ արտայայտութիւններ լսելու դէպքում միջամտէք եւ ասացէք. “Եկէք չշեղուանք թեմայից: Լրջօրէն վերաբերուենք խնդրին առանց որեւէ անձնաւորեցման”: Եթէ ցանկանում էք փոխել քննարկման թեման նախապէս թոյլտւոյթուն խնդրէք:
- 9. Քննարկումը ստեղծագործական, հաճելի եւ արդիւնաւետ գործընթաց է:** Քննարկման արդիւնքը պէտք է լինի որեւէ բանի ուսուցանումը, Ձեր կամ ուրիշների մտքերի յստակեցումը, պարզաբանման կարիք ունեցող նոր հարցերի եւ խնդիրների բացայայտումը:
- 10. Ամէն անգամ քննարկում նախաձեռնելուց առաջ.**

- Յստակեցրեք Ձեզ յատկացուած ժամանակահատուածը:
- Կազմէք քննարկման օրակարգը. ի՞նչ խնդիրներ պէտք է քննարկուեն եւ ինչպէ՞ս պէտք է իրականանայ քննարկման գործընթացը:
- Համոզուէք, որ ունէք քննարկմանն անհրաժեշտ բոլոր փաստերն ու տեղեկութիւնները: Եթէ ոչ, ապա լրացրէք բացփողումները եւ յետաձգէք տուեալ խնդրի քննարկումը:
- Մի վիճէք փաստերի շուրջ: Փաստերի վերաբերեալ վիճաբանութիւնները չեն կարող լուծուել քննարկման ընթացքում: Դրանք հետազօտման եւ ապացոյցների կարիք ունեն:

11. Հիւրասիրութիւն – Սուրճը եւ Թէյը հասանելի են “Ոսկէ Միջինում” եւ մասնակիցները ակնկալում են պայմանական ներդրում կատարել Ներդրումների Արկղ՝ այս ծախսերը հոգալու համար (200դ.): Ակնկալում է, որ դուք կը լուանաք եւ ետ կը վերադարձնէք ձեր բաժակը պահարան եւ կը մաքրէք սեղանը օգտագործելուց յետոյ:

12. Ոսկէ Միջինի աշխատակազմը պատրաստ է օգնելու Ձեզ ցանկացած հարցում: Աշխատակազմին վերաբերուէք յարգանքով: Առաջարկութիւնները միշտ ողջունելի են:

“Ոսկէ Միջինի” Խորհուրդը

“Ոսկէ Միջինի” Խորհուրդը նշանակուած է “Առակ 29” Բարեգործական Հիմնադրամի կողմից, որը հանդիսանում է “Ոսկէ Միջինի” հովանաւորը:

Մասնակից կազմակերպութիւններ եւ անհատներ

“Ոսկէ Միջինում” անցկացուող միջոցառումներին մասնակցելը եւ տարածքի յարմարութիւններից օգտուելը որոշակի խմբերին եւ անհատներին շնորհուած արտօնութիւն է “Ոսկէ Միջինի” Խորհրդի կողմից: Իրաւունքների չարաշահման դէպքում տուեալ կազմակերպութիւնները եւ անհատները կարող են զրկուել այդ արտօնութիւնից: Մասնակից կազմակերպութիւնները կարող են օգտուել “Ոսկէ Միջինի” յարմարութիւններից, եթէ տեղի համակարգողին (կոորդինատոր) ներկայացնեն գրաւոր խնդրագիր՝ իրենց կողմից առաջադրուած ժամացուցակով: Տարածքը նախատեսուած է մինչեւ 30 հոգու համար: “Ոսկէ Միջինի” ցուցակագրող կոորդինատորը (համակարգող) նմանատիպ խնդրագրերին կը ջանայ պատասխանել 2 աշխատանքային օրուայ ընթացքում: Իւրաքանչիւր 6 ամիսը մէկ անգամ բոլոր գործընթացների գրաֆիկները կը վերանայուեն համոզուելու համար, որ տարածքն արդիւնաւետօրէն է օգտագործուած:

Առաւելութիւնը կտրուի “Ոսկէ Միջինի” Խորհրդի կողմից կազմակերպուող միջոցառումներին:

Միջխմբային Քննարկումներ

“Ոսկէ Միջինի” կողմից իրականացուող գլխաւոր միջոցառումներից մէկը կը լինի **Միջխմբային Քննարկումների** կազմակերպումը: Դրա նպատակը որեւէ թեմայի շուրջ հետաքրքրութիւն դրսեւորող, սակայն տարբեր խմբերի պատկանող անձանց համախմբումն է: Միջխմբային քննարկումները իրականացում են միայն հրաւերներով: Մասնակից կազմակերպութիւններն իրենց կողմից քննարկման թեկնածուներ կ'առաջադրեն: “Ոսկէ Միջինի” աշխատակազմը կարող է հրաւիրել լրացուցիչ անձանց: Յուսով ենք, որ բացի արդիւնաւետ քննարկում անցկացնելուց մասնակիցները մասնակիցները հնարաւորութիւն կ'ունենան՝ միմեանց աւելի լաւ ճանաչելու եւ նոր ընկերական ու գործընկերական յարաբերութիւններ հաստատելու:

Սպասքապահարանի Ակումբ

Անհատները, որ հրաւիրուած կը լինեն դառնալու “Ոսկէ Միջինի” անդամներ, կ'ունենան իրենց անձնական բաժակը (թէյի կամ սուրճի համար) եւ իրենց յատուկ տեղը սպասքապահարանում բաժակի համար: Ժամանակ առ ժամանակ “Ոսկէ Միջինի” խորհուրդը յաւելեալ անհատների կը հրաւիրի, որոնք ակտիւ էին միջխմբային քննարկումների ընթացքում կամ “Ոսկէ Միջինի” արժեքների օրինակելի կրողներ են, դառնալու Սպասքապահարանի Ակումբի անդամներ՝ նուիրելով նրանց իրենց անձնական բաժակը եւ տեղը պահարանում: Ակնկալում է, որ Սպասքապահարանի Ակումբի անդամները յատուկ ջանք կը ներդնեն մասնակցելու “Ոսկէ Միջինի” միջոցառումներին եւ կը զարգացնեն “Ոսկէ Միջինի” միջոցառումներն եւ արժեքները: Քանի որ պահարանում տեղը սահմանափակ է, ակնկալում է, որ Ակումբի անդամները կը զիջեն իրենց տեղը (նրանք կարող են վերցնել իրենց բաժակը) ինքնակամ կամ “Ոսկէ Միջինի” Խորհրդի խնդրանքով, այն ժամանակ, երբ կը լինեն աւելի քիչ հետաքրքրուած կամ ակտիւ “Ոսկէ Միջինում”: